

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՏԱՆ-ԳՀԾԶԲ-2020/08**

ք. Երևան

«22» սեպտեմբերի 2020թ.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ն. Մելքումյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լոկատոր» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» նախագծման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 28,000,000 (քսանութ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը

հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության

նախարարություն

Ք. Երևան Վ.Սարգսյան 3/3

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011034338

Հ/Հ 02565518

Գլխավոր քարտուղար

Լ. Մելքոնյան

Նախագահություն

Կ.Տ.



«Լոկատոր» ՓԲԸ

Ք. Երևան, Կոմիտասի 36ա-22

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ

Հ/Հ 2474703386220000

Հ/Հ 00095651

Տնօրեն

Ա. Կալատրյան

Կատարողություն

Կ.Տ.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	71331500/1	Տեխնիկական բնութագիրը կցվում է***	դրամ	28,000,000	1	ՀՀ, համաձայն տեխնիկական բնութագրի	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 60 օրացուցային օր:

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ***

Համաձայն ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 7 թիվ 1346-Լ որոշման՝ ՀՀ տարածքում անհրաժեշտ է կառուցել 31 օբյեկտ, որոնցից 5-ը վերակառուցվելու են: Բոլոր օբյեկտները գործելու են ընդհանուր համակարգում: Համակարգը բաղկացած է.

Գլխավոր կայան-1 հատ

Երևան, Թբիլիսյան խճուղի 29, կոորդինատները՝ N40° 14' 10.1" E 44° 33' 15.6, կայմը՝ N40° 14' 05.7" E 44° 32' 15.6" (կայանը ենթակա է վերակառուցման):

Ֆիքսված սպասարկվող կայաններ - 5 հատ

(ք.Երևանում, ք.Գյումրիում և ք.Վանաձորում գործող կայանները ենթակա են վերակառուցման)

ք.Երևան, Նուբարաշեն 3-րդ փողոց, 23 տուն :	N40° 05' 41.9" E 44° 33' 23.9"
ք.Երևան, ՀԱԹ, Անդրանիկի փող. 60:	N40° 10' 19.6" E 44° 26' 39.5"
ք. Գյումրի, Սևակի փող. 2 :	N40° 49' 45.5" E 43° 49' 55.9"
ք. Վանաձոր, Ուսանողական փող. 8:	N40° 80' 00" E 44° 52' 01"
ք.Գորիս (հասցեն ճշտված չէ)	N39° 31' 11" E 46° 20' 53"

Բոլոր կայանները ենթակա են վերակազմավորման:

Ֆիքսված չսպասարկվող կայաններ- 20 հատ

ք.Երևան, Կենտրոն,	N40° 10' 35.4" E 44° 30' 32.1"
ՀՀ Սյունիքի մարզ,	
ք. Ագարակ	N 38° 51' 29" E 46° 12' 36"
գ. Սարակունք,	N 39° 35' 36" E 45° 53' 16"
ք. Քաջարան	N 39° 09' 04.7" E 46° 09' 17.8"
ՀՀ Վայոց Ձորի մարզ,	
գ. Վերինշեն	N 39° 47' 05.3" E 45° 21' 06.9"
գ. Խաչիկ	N 39° 37' 21.1" E 45° 12' 30.8"

ՀՀ Շիրակի մարզ,

գ. Կրասար,

N 41° 01' 02.65" E 43° 49' 29.08"

ՀՀ Լոռու մարզ,

գ. Ձորամուտ,

N 41° 11' 50.04" E 44° 17' 18.28"

գ. Ագորի

N 41° 05' 21.98" E 44° 36' 52.88"

ՀՀ Արագածոտնի մարզ,

գ. Վերին Սասնաշեն

N 40° 22' 02.85" E 43° 59' 05.09"

գ. Մաստարա

N 40° 27' 49.7" E 43° 01' 21.8"

գ. Բազմաբերդ

N 40° 20' 20" E 44° 00' 42.6"

ՀՀ Տավուշի մարզ,

ք. Նոյեմբերյան

N 40° 20' 20" E 45° 00' 00"

գ. Ակնաղբյուր

N 40° 57' 43.25" E 45° 09' 33.64 "

գ. Վերին Կաթնաղբյուր

N 40° 52' 47.17" E 45° 26' 31.58 "

ՀՀ Արարատի մարզ,

ք. Արտաշատ

N 39° 57' 13.13" E 44° 33' 07.43"

ՀՀ Կոտայքի մարզ,

ք. Հրազդան

N 40° 32' 08.11" E 44° 46' 10.25"

ՀՀ Գեղարքունիքի մարզ,

ք. Ճամբարակ

N 40° 35' 57.58" E 45° 21' 17"

ք. Վարդենիս,

N 40° 11' 16.99" E 45° 44' 28.3"

ք. Մարտունի

N 40° 08' 11.56" E 45° 18' 08.59"

Կայանների տեղակայման վայրերը կարող են փոփոխվել Կատարողի կողմից, հաշվի առնելով հաշվարկները, հաղորդակցությունները և տեղանքի մանրակրկիտ ուսումնասիրությունները:

Շարժական կայաններ - 5 հատ

Սույն փաստաթղթի նպատակն է Համակարգի կառուցման Տեխնիկական առաջադրանքի կազմման համար տրամադրել տեխնիկական և անհրաժեշտ այլ պարամետրեր:

1. Համակարգին ներկայացվող ընդհանուր պահանջները

Համակարգի ստեղծման ժամանակ պետք է հաշվի առնվեն «Ապեկտրի կառավարման ժամանակակից ավտոմատացված համակարգերի նախագծման ղեկավարող սկզբունքներ» ՀՄՄ ուղեցույցի դրույթները:

Համակարգը պետք է նախագծվի և կառուցվի տեղեկատվական համակարգերի ժամանակակից տեխնոլոգիական հարթակների, տեղաբաժնության և ճարտարապետության հիման վրա, որոնք կապահովեն տեղեկատվության արագագործության, անվտանգության, հուսալիության, ամբողջականության և ավտոմատացման բարձ մակարդակ:

Համակարգում պետք է հաշվի առնվեն անօրինակ անհասանելիությունից տեղեկատվության պաշտպանության ապահովման եղանակները՝ ներքոնշյալ հերթականությամբ.

- Հասանելիության ղեկավարման այնպիսի եղանակների օգտագործում, ինչպիսիք են գաղտնաբառեր և բազմա մակարդակային արտոնություններ՝ համակարգի գործառնություններին օգտատերերի հասանելիության սահմանափակման համար (ծրագրային ապահովման պաշտպանություն):
- Համակարգի տեխնիկական սպասարկման համար նախատեսված պարբերաբար գործողությունների կատարում, օրինակ՝ պահեստային սարքավորումների ստուգում, համակարգի պաշտպանություն և այլն:
- Հեռահաղորդակցական ցանց հաղորդվող տեղեկատվության կոդավորման հնարավորություն (ծրագրային ապահովման պաշտպանություն):
- Այնպիսի կապի գծերի և երթուղիների օգտագործում, որոնք պետք է պաշտպանված լինեն արտաքին անօրինական հասանելիությունից (ծրագրային ապահովման պաշտպանություն):

Նախագծման ժամանական անհրաժեշտ է հաշվի առնել, որ ռադիոհաճախականային սպեկտրի շահագործման ամենօրյա կառավարման համար նախատեսված հիմնական գործիքն է կանոնակարգային դրույթների և ընթացակարգերի հավաքածուն, որն ընդունված է սպեկտրի շահագործման կառավարման համար:

Տվյալների տեղեկատվական բազաները, ներառյալ՝ ռադիոհաճախականային սպեկտրի բոլոր օրինական օգտագործողների և ռադիոէլեկտրոնային միջոցների (այսուհետև՝ ՌԷՄ) տեխնիկական բնութագրերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվական բազաները, պետք է վարչական և տեխնիկական հիմք հանդիսանան այդ գործընթացի համար: Այդ բազաներում գտնվող տեղեկատվության վերլուծությունը պետք է հեշտացնի ռադիոհաճախականային սպեկտրի օգտագործման կառավարման գործընթացը, որը ռադիոհաճախականային սպեկտրի բաշխման դեպքում ռադիոհաճախականությունների հատկացումների ժամանակ պետք է հանգեցնի համապատասխան որոշումների ընդունման:

Տեխնիկական առաջադրանքում կատարողի նկատմամբ պետք է լինի կառուցման համալիր առաջարկի տրամադրման այնպիսի պահանջ, որն իր մեջ կներառի.

- Ծրագրային իրականացման համալիր տեխնիկական լուծում,
- Մասնագիտացված ծրագրային ապահովում, որն իր մեջ ներառում է ադմինիստրատիվ կառավարման և ճարտարագիտական վերլուծության տվյալների պահպանման ենթահամակարգի համալիր,
- Անձնակազմի ուսուցման աշխատանքների իրականացում,
- Ստեղծման նախագծի իրականացման ժամանակային գրաֆիկ,

- Կառուցված համակարգը պետք է թույլ տա պատվիրատուին ապագայում մեծացնել նրա հնարավորությունները կայանների քանակի ավելացումով, ռադիոհսկման սահմանների ընդարձակումով և այլն՝ առանց ավտոմատացման և ինտեգրման մակարդակների կորստի:

Համակարգը պետք է ապահովի ճառագայթումների հսկման հնարավորությունը՝ հաճախականության հատկացման պայմաններին համապատասխանությունը ստուգելու, ինչպես նաև հաճախականային շերտի ստուգման, հաճախականային կապուղու զբաղվածությունը չափելու, խանգարումների դեպքերը ուսումնասիրելու և չարտոնագրված ճառագայթումները որոշելու համար:

Համակարգի բոլոր կետերի (ռադիոմոնիթորինգի և տեղորոշման գլխավոր կայան, ռադիոմոնիթորինգի (ներառյալ՝ տեղորոշումը) ֆիքսված կառավարվող և ոչ կառավարվող և ռադիոմոնիթորինգի (ներառյալ՝ տեղորոշումը) շարժական կայանների) սարքավորումներով հագեցվածությունը պետք է իրագործվի ընդհանուր լուծումով:

Համաձայն Հեռահաղորդակցության Համաշխարհային Միության Ռադիոկապի ռեգլամենտի (այսուհետև՝ Ռեգլամենտ)՝ ստեղծվող համակարգի կողմից կարևորագույն խնդրի լուծումը պետք է լինի կառավարական կիրառության համար ռադիոհաճախականային սպեկտրի վերաբերյալ տվյալների օգտագործումը այնպես, որ կառավարական կառուցվածքները արագորեն ստանան տարբեր կարգի սպեկտրի օգտագործողների մասին հավաստի տեղեկատվություն: Գործնականում դա ենթադրում է կառավարական ուժային կառուցվածքների համար սպեկտրի օգտագործման հետ կապված այս կամ այն տեղեկատվության տրամադրումը՝ տեղեկատվության հասանելիության համապատասխան բաժանումով:

Ստեղծված համակարգը պետք է թույլ տա ստացված չափման արդյունքները ինտեգրել սպեկտրի կառավարման գործող և պլանավորվող համակարգերի հետ՝ ռադիոհաճախականային ռեսուրսի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով:

Համաձայն Ռեգլամենտի ռադիոհաճախականային սպեկտրի օգտագործման կառավարման՝ գործընթացը պետք է հիմնված լինի այս կամ այն տեխնոլոգիաների և օպերատորների կողմից ռադիոհաճախականությունների և ռադիոհաճախականային սպեկտրի փաստացի օգտագործման հիման վրա: Ոչ պակաս կարևոր է հատկացումների իրական պարամետրերին (հոսսայի ընդունման գոտիներ, տվյալների փոխանցման արագության քարտեզներ, հասանելիության քարտեզներ և այլն) հաշվառումը էլեկտրամագնիսական համատեղելիության գնահատման իրականացման կամ բնակչությանը ծառայություններ տրամադրող հեռահաղորդակցության ցանցերի աշխատանքների որակի ցուցանիշների գնահատման համար:

Համակարգի հանգույցների ծրագրային ապահովումը պետք է ունենա օգտագործողի ընդհանուր գրաֆիկական ինտերֆեյս անգլերեն և/կամ ռուսերեն լեզուներով: Փաստաթղթերը պետք է լինեն անգլերեն և/կամ ռուսերեն լեզուներով: Համակարգի սարքավորումները և բոլոր այլ տեխնիկական միջոցները պետք է հաշվարկվեն Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմաններում շահագործման համար:

Տվյալների փոխանցման համակարգը պետք է կառուցվի օպտիկամանրաթելային կապի գծերով՝ ոչ պակաս քան 2048 կբիթ/վ թողունակությամբ հատկացված առանձին կապուղիների կազմակերպմամբ կամ 3G և 4G անլար կապի գծերով:

Օբյեկտների միջև տվյալների փոխանցումը պետք է կատարվի իրական (ռեալ) ժամանակում: Պետք է հաշվի առնել, որ կայանների միջև կապի գծերը կազմակերպվում են Պատվիրատուի կողմից: (Տեխնիկական առաջադրանք ներկայացնել առաջարկություններ):


Տվյալ բաժնի նպատակն է՝ տալ սպեկտրի օգտագործման կառավարման համառոտ նկարագիրը և ռադիոհսկման դերը, որպես այդ գործընթացի հիմնական գործառույթ: Սպեկտրի օգտագործման կառավարման համակարգերի հետ կապված քննարկվող հարցերը բերված են նկար 1-ում, որպես ընդհանուր դիտարկում:

Համակարգը պետք է ունենա հնարավորություն ինչպես նշված ռադիոճառագայթումների վերաբերյալ մանրակրկիտ տեղեկատվության ավտոմատացված ստացման, այնպես էլ ռադիոհաճախականային սպեկտրի, ֆիքսված (գլխավոր, սպասարկվող և ոչ սպասարկվող) և շարժական կայանների էլեկտրոմագնիսական հասանելիության գոտում ռադիոհաճախականային սպեկտրի զբաղվածության և էլեկտրամագնիսական իրավիճակի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվության ստացման համար:

Առաջարկվող համակարգը պետք է լինի ճկուն, որպեսզի ադապտացվի պատվիրատուի աշխատանքային գործընթացներին և լուծվող խնդիրներին:

Ներդրվող համակարգը պետք է ապահովի հետևյալ արդյունքները.

- Ռադիոհաճախականային հատկացումների (ՌՀՀ) և էլեկտրամագնիսական համատեղելիության (ԷՄՀ) հաշվարկների վերաբերյալ ներկառուցված տվյալների բազայի առկայություն,
- ՌՀՀ-ի տվյալների բազայի պահպանման հնարավորություն,
- Ռադիոհսկման իրականացման արդյունքների ընթացքում ռադիոհաճախականային սպեկտրի բեռնվածության վերաբերյալ ստացված տեղեկատվության պահպանում,
- Ռադիոէլեկտրոնային միջոցների հայտավորված և չափված բնութագրերի համեմատում,
- Ռադիոհաճախականային սպեկտրի օգտագործման պլանավորում,
- Հայտավորման միջազգային կոորդինացման արտաբերում,
- Ազգային և միջազգային հաճախականությունների բաշխումների աղյուսակների արտաբերում և պահպանություն,
- Վիճակագրական հաշվետվությունների նախապատրաստում (ռադիոհաճախականային սպեկտրի զբաղվածության, ՌԷՄ-ների քանակի և այլն),
- Լուծվող խնդիրներից կախված բազմազան հաշվետվությունների և ձևաչափերի կազմման հնարավորություն,
- Հաշվի առնելով գործող ՌԷՄ-ները՝ նոր ՌԷՄ-ների շահագործման գործարկումը իրականացնելու արագ որոշման հնարավորություն,
- ՌՀՄ և ՌԷՄ-ների շահագործողների վերաբերյալ վարչարարական և տեխնիկական տեղեկատվության միասնական տեղեկագրերի արտաբերում,
- Ռադիոհաճախականային սպեկտրի արդյունավետ վարչարարական կառավարման համար ռադիոհաճախականային տիրույթների իրական զբաղվածության վերաբերյալ արդիական տվյալների ստացում,
- ՌԷՄ-ների ռադիոճառագայթումների և ռադիոհաճախականային շերտերի զբաղվածության պլանային ավտոմատացված ռադիոհսկում՝ ռադիոհաճախականային սպեկտրի ՌԷՄ-ների էլեկտրամագնիսական համատեղելիության և շահագործման տեսանկյունից,
- Քաղաքացիական նշանակության ՌԷՄ-ների տեխնիկական հսկման և ռադիոճառագայթումների տեխնիկական բնութագրերի ստուգման ապահովում,
- Անօրինական գործող հաղորդակների հայտնաբերում և նույնականացում,
- Ռադիոխանգարումների աղբյուրների և խանգարումների գոտիների հայտնաբերում:



Նկ. 1 (Նկարը՝ համաձայն ՀՀ կառավարության որոշման)

Սպեկտրի օգտագործման կառավարումը իրենից ներկայացնում է վարչարարական, գիտական և տեխնիկական գործընթացների համադրություն, որն անհրաժեշտ է ստեղծման սարքավորումների և ռադիոկապի ծառայությունների առանց խանգարումների արդյունավետ աշխատանքների ապահովման համար: Սպեկտրի օգտագործման կառավարումը ռադիոհաճախականային սպեկտրի վարչարարական կառավարման և կարգավորման ընդհանուր գործընթացն է:

Սպեկտրի կառավարման նպատակն է առավել բարձրացնել սպեկտրի օգտագործման արդյունավետությունը, հնարավորինս նվազեցնել խանգարումները և բացառել սպեկտրի չարտոնագրված և անհապատասխան օգտագործումը: Կանոնները և կարգավորող դրույթները, որոնք հիմնված են համապատասխան օրենսդրության վրա, հանդիսանում են սպեկտրի օգտագործման կառավարման գործընթացի կարգավորող և օրենսդրական հիմք: Տվյալների տեղեկատվական բազաները, որոնք ներառում են նաև սպեկտրի բոլոր արտոնագրված օգտագործողների վերաբերյալ մանրամասն տվյալներ, պետք է ապահովեն այդ գործընթացի վարչարարական և տեխնիկական հիմքը:

2. Հսկման ծառայության խնդիրները և նպատակները

2.1. Ռադիոկապի Կարգավորումներից բխող խնդիրները.

Հսկման ծառայության ներքո թվարկված խնդիրները բխում են Ռադիոկապի Ռեգլամենտից

- ճառագայթումների հսկում՝ հաճախականությունների հատկացման պայմաններին համապատասխանության ստուգման նպատակով,
- հաճախականային կապուղիների զբաղվածության և հաճախականային շերտերի շահագործման դիտարկում,
- խանգարումների դեպքերի ուսումնասիրություններ,
- չարտոնագրված ճառագայթումների նույնականացում և դադարեցում:

2.2. Ազգային մակարդակի խնդիրներ

Ի լրումն 3.1-ում նշված խնդիրների՝ հաճախ, ռադիոհսկման ծառայությունների վրա են դրվում խնդիրներ, որոնք անմիջապես չեն բխում ռադիո կարգավորումներից.

- օգնության ցուցաբերում հատուկ դեպքերում, ինչպիսիք են մեծ սպորտային միջոցառումները և պետական այցերը,

- լիցենզավորված հաղորդակների ընդհանուր տվյալների բազայի ստեղծում,
- հարևան պետությունների հետ հաճախականային բաշխումների համակարգում,
- հաճախականային սպեկտրի օգտագործման արդյունավետության բարձրացում,
- ռադիոձածկոյթների գոտիների չափումներ,
- ՌԷՄ-ների ԷՄՀ հետազոտություններ,
- տեխնիկական և գիտական հետազոտություններ:

3. Չափումների խնդիրները և անհրաժեշտ սարքավորումները

Խնդիրների իրականացման համար ռադիոհսկման և տեղորոշման կայանները պետք է ընդունակ լինեն նույնականացնելու և որոշելու ճառագայթման աղբյուրների տեղակայման վայրերը, ինչպես նաև չափելու նրանց հիմնական բնութագրերը:

3.1 Հսկման կայանների առավել կարևոր խնդիրները պետք է լինեն.

- հաճախականության չափումներ,
- ֆիքսված կետերում դաշտի լարվածության և հզորության հոսքի խտության չափումներ,
- հաճախականային շերտի լայնության չափումներ,
- մոդուլյացիայի որոշում,
- սպեկտրի չափումներ,
- ռադիոտեղորոշում,
- դաշտի լարվածության չափումներ երթուղու երկայնքով,
- կապի տեխնոլոգիաների նույնականացում և հսկում, որոնք գործում են այնպիսի հաճախականային ստանդարտներով, ինչպիսիք են GSM, CDMA, 3G, 4G: Համակարգը պետք է պատրաստ լինի նաև այնպիսի տեխնոլոգիաների չափումների, ինչպիսիք են «5G», Wi-Fi ինչպես նաև նմանատիպ կապի համարգների չափումների՝ ըստ պարամետրերի (տեղակայման նվայրի կոդի հիմնատներ, ազդանշանի մակարդակ, բազային կայանի նույնականացման համար, երկրի շարժական կապի կոդի MCC (MobileCountryCode)-երկրի շարժական կապի կոդի, MNC (MobileNetworkCode)-շարժական կապի օպերատորի կոդի, LAC (LocationAreaCode)-տեղակայման տարածաշրջանի կոդի, LAI (LocationAreaIdentify)-տեղակայման գոտու նույնականացում, որը նկարագրում է GSM ցանցում գոտու տեղակայումը ամբողջ աշխարհի մասշտաբով, CI (CellIdentify)-բջջի նույնականացում, BCCH (BroadcastControlChanel)-լայնաշերտ կապուղու ղեկավարում),
- ոչ ճիշտ կարգավորված բազային կայանների հայտնաբերում,
- թվային ցանցերի հստակ չափանիշների չափումներ,
- կապի ֆիքսված գծերում ճառագայթումների հսկում,
- ռադիոհեռարձակման համակարգերի նույնականացում և հսկում:

3.2 Հսկման կայանների չափիչ սարքավորումները բաղկացած են՝

- շրջանաձև ուղղվածության անտենաներից,
- ուղղված անտենաներից,
- ընդունիչների,
- ռադիոտեղորոշիչներից,
- հաճախականությունների չափման համար նախատեսված սարքավորումներից և ծրագրային ապահովումից,
- դաշտի լարվածության համար չափիչներից և ծրագրային ապահովումից,
- շերտի լայնության չափման համար նախատեսված սարքավորումներից և ծրագրային ապահովումից,
- կապուղու զբաղվածության չափման համար նախատեսված սարքավորումներից և ծրագրային ապահովումից,
- հաճախականությունների սպեկտրի օգտագործման գրանցման համար նախատեսված սարքավորումներից և ծրագրային ապահովումից,
- ծայնագրող սարքավորումներից:

4. Կայաններին ներկայացվող հիմնական պահանջները

Էլեկտրամագնիսական համատեղելիության ապահովման նպատակով ռադիոէլեկտրոնային միջոցների ճառագայթման չափումներ և հսկում, սանիտարական նորմերի և օրենսդրական սահմանափակումների կատարում:

Որոշակի տեղանքում գործող հաղորդակների վերաբերյալ տեղեկատվության ստացում, նրանց տեսակի, հիմնական բնութագրերի, քանակի, ինչպես նաև հաղորդվող տեղեկատվության դեմոդուլավորման/դեկոդավորման որոշում՝ հայտանբերման և հսկման նպատակով:

Ռադիոհսկման գլխավոր միջոց է հանդիսանում ռադիոընդունող սարքավորումը (ՌԸՍ), որը նախատեսված է հաճախականությունների որոշակի տիրույթում ռադիոազդանշանների ընդունման համար: Ռադիոընդունիչ սարքավորման կարևորագույն արտաքին տարր է հանդիսանում անտենան, որն ընտրվում է կախված հաճախականային տիրույթից, խնդիրներից և ռադիոընդունող սարքավորման կիրառման պայմաններից: ՌԸՍ-ը կարող է համալրված լինել տարբեր դեմոդուլատորներով, ռադիոազդանշանների տեսանելի արտաբերման և գրանցման համար նախատեսված սարքավորումներով, ծայնագրման հնարավորություններով, տեխնիկական վերլուծության տարբեր միջոցներով: Համակարգի կայանները ապահովում են հետևյալ հիմնական գործառույթների իրականացումը.

–տեղորոշման, տեխնիկական վերլուծության և աուդիոհսկման խնդիրների զուգահեռ և/կամ հաջորդական կատարումներ,

–ազդանշանների պարամետրերի ավտոմատ չափումներ՝ շերտ, մակարդակ, լարվածություն, հաճախականության շեղում հիմնական արժեքից՝ համաձայն ՀՄՄ պահանջների,

–ազդանշանների ժամանակային, հաճախականային, էներգետիկ պարամետրերի ոչ ավտոմատ չափումներ (ծեռքով՝ ըստ անհրաժեշտ չափորոշիչի),

–անհատական կարգավորումներով չափումներ՝ ըստ տվյալների բազայի,

–ամպլիտուդային, հաճախականային և ֆազային մոդուլավորման պարամետրերի ավտոմատացված չափումներ՝ ՀՄՄ ուղեցույցներին համապատասխան,

–սկանավորում՝ ըստ հաճախականությունների ցանցի՝ սկանավորման տիրույթի սկիզբի, վերջի և քայլի կամայական տրվող պարամետրերով, ինչպես նաև կարգավորվող ժամանակային և սահմանային արժեքներով,

–ՌԸՍ-ում պահպանված հաճախականությունների ցանկի սկանավորում՝ կարգավորվող ժամանակային և սահմանային արժեքներով,

–միացման ժամանակ և ծեռքով մեկնարկի դեպքում ավտոմատ ինքնաստուգում,

–խնդիրների կատարման ժամանակ ժամանակային և թվային պարամետրերի կարգավորում (ընդունիչներին բնորոշ սկանավորումների և չափումների քանակներ, չափումների և պարամետրերի միջինացված ժամանակներ),

–ՌԸՍ-ի սեփական հիշողության սարքում սպեկտրոգրամների և հսկման արդյունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության պահպանում,

–ՌԸՍ-ի սեփական հիշողության սարքում սարքավորումների բազային կարգավորումների պահպանում (մի քանի տարբերակ),

–անտենաների ընտրություն,

–անտենային հատվածի պարամետրերի պահպանում, շտկում և ընտրություն,

անտենա-ֆիդերային հատվածի չշտկված կարգավորման և ՌԸՍ-ի մուտքին ազդանշանի մակարդակի գերազանցման պատկերում,

- MicrosoftOffice և/կամ OpenDocument և ՀՀ տարածքում կիրառվող այլ ձևաչափերով հաշվետվությունների կազմման ապահովում:

Տեղորոշման խնդիրների լուծման ժամանակ համակարգի կայանները իրականացնում են հետևյալ գործառույթները.

–ՌԸՍ-ների համար տեղորոշման և վերլուծության խնդիրների զուգահեռ և/կամ հաջորդաբար կատարում այն ծավալով և պարամետրերով, որոնք բերված են տեխնիկական տվյալներում,

–«տեղորոշման որակ» սահմանափակող պարամետրի մուտքագրում ծեռքով (0-ից մինչև 100%),

–«տեղորոշվող ազդանշանի մակարդակ» սահմանափակող պարամետրի մուտքագրում ծեռքով,

–«տեղորոշման ժամանակի միջինացում» պարամետրի մուտքագրում ծեռքով (0.5 մվ նվազագույն արժեք և բարձր),

«տեղորոշման շերտ» պարամետրի մուտքագրում ծեռքով,

–«անկյուններ հյուսիսային ուղղությունից» և «անկյուններ ընթացիկ ուղղությունից» տեղորոշման արժեքների պատկերում,

–տեղորոշման արդյունքների պատկերում թվային տեսքով (տեղորոշումը և նրա արժեք աղյուսակի կամ տողի տեսքով) և/կամ գրաֆիկական տեսքով (բևեռային գրաֆիկ, սպեկտրոգրամներ, համայնապատկերի հաճախականային-տեղորոշման գրաֆիկ),

–լրացուցիչ պարամետրերի պատկերում թվային տեսքով՝ «նախորդ տեղորոշման արժեք և ընթացիկ տեղորոշման շեղվածությունը»,

–«տեղորոշվող ազդանշանի որակ» և «տեղորոշվող ազդանշանի մակարդակ» ընթացիկ արժեքների գրաֆիկական տեսքով պատկերում,

–տեղորոշման արդյունքների Հաճախականային-տեղորոշման պատկերում համայնապատկերի տեսքով («հաճախականություն-տեղորոշում» կոորդինատներում),

–տեղորոշման հնարավորություն սկանավորման ռեժիմում ըստ հաճախականությունների ցանկի և սկանավորում ըստ «հաճախականությունների միջակայքի»՝ տրված ժամանակային և էներգետիկական պարամետրերով,

–տեղորոշման համակարգի փոխանցման հնարավորություն «բարձր զգայնության» կարգավիճակից (Շատ բարձր հաճախականությունների/ուլտրաբարձր հաճախականությունների (ՇԲՀ/ՈւԲՀ) տիրույթի համար նախատեսված տեղորոշային անտենա-ֆիդերային համակարգի ակտիվ կարգավիճակ) դեպի «փոքր աղավաղումներ» կարգավիճակ (ՇԲՀ/ՈւԲՀ տիրույթի համար նախատեսված տեղորոշիչ անտենա-ֆիդերային համակարգի պասիվկարգավիճակ),

–ճառագայթման աղբյուրի տեղակայման որոշում և պատկերում էլեկտրոնային քարտեզի վրա (շարժման ընթացքում),

–քարտեզագրական միջոցների համատեղելիության հնարավորություն և վեկտորային քարտեզի օպերատիվ միացում:

ՇԲՀ/ՈւԲՀ հաճախականային տիրույթներում ազդանշանի տեղորոշման ժամանակ արագ և հուսալի տեղորոշումը պետք է աշխատի ազդանշանի աղբյուրի ճշգրիտ որոշման համար առավել հարմարավետ (համաձայն ՄՇՅ ITUSMH 2011 տեղեկագրի) եղանակով:

Ճառագայթման պարամետրերի եթերային չափումները իրականացվելու են համաձայն ՀՄՄ հետևյալ ուղեցույցների.

- հաճախականության և նրա շեղման չափումներ (ITU-R SM.377)
- դաշտի լարվածության չափումներ (ITU-RSM.378)
- շերտի լայնության չափումներ (ITU-RSM.443)
- սպեկտրի զբաղվածության չափումներ (ITU-R SM.1880/ ITU-R SM.328)
- ՌԷՄ-ների տեղակայման դիրքի որոշում,
- ՌԷՄ-ների ազդանշանների ծայնագրում,
- զբաղվածության աստիճանի գնահատում (ռադիոհաճախականային սպեկտրի ներբեռնում ՌԷՄ-ների ազդանշաններով),
- չարտոնագրված հաղորդակների և ռադիոխանգարումների աղբյուրների բացահայտում (տեղակայման վայրի որոնում և որոշում),
- տրված ծրագրով և ժամանակացույցով ռադիոազդանշանների ավտոմատ չափումներ և հսկում,
- ռադիոհաճախականային սպեկտրի ավտոմատացված համակարգի ղեկավարման ենթահամակարգին ռադիոհսկման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
- լիցենզավորված հաղորդակների մոնիտորինգ՝ աշխատանքային պարամետրերի համապատասխանության ստուգման նպատակով
- տեղորոշման արդյունքների տրամադրում և թվային քարտեզների վրա տեղորոշում,
- ազդանշանների նույնականացում և չափումներ՝ համաձայն ITU-RSM.1600 ուղեցույցի,
- ռադիոհաճախականային սպեկտրի սկանավորման արագությունը պետք է լինի առավելագույնս մեծ,
- երկրորդ դասի ինտերմոդուլացիոն բաղադրիչներով հատման կետը, երրորդ դասի ինտերմոդուլացիոն բաղադրիչներով հատման կետը (փոքր աղավաղումների կարգավիճակ), միջանկյալ հաճախականության ընդունման հայելային կապուղու և միջանկյալ հաճախականության ընդունման կապուղիների մակարդակների ճնշումը, աղմուկների գործակիցը պետք է չափվեն համաձայն ITU-R SM. 1836-1840,
- չափման գնահատում,
- ենթահամակարգերի ինտերֆեյս,
- լիցենզավորված հաճախականությունների ցանկի ներբեռնում,
- չափման արդյունքների արտաբեռնում,
- հաշվետվությունների կազմում:

5. Համակարգի գլխավոր, սպասարկվող, չսպասարկվող և շարժական կայաններ

Համակարգը պետք է ներառի հետևյալ տեսակի կայաններ.

- գլխավոր կայան,
- ռադիոմոնիթորինգի և տեղորոշման սպասարկվող ստացիոնար կայաններ
- ռադիոմոնիթորինգի և տեղորոշման ոչսպասարկվող ստացիոնար կայաններ
- մոնիթորինգի և տեղորոշման շարժական կայաններ:

5.1 Գլխավոր կայան

Գլխավոր կայանը ներառում է՝

- ամրակցված կառավարվող, չկառավարվող և շարժական կայաններից ստացված արդյունքների կառավարման և մշակման համար 2 միանման օպերատորական աշխատատեղ,
- այլ ծառայությունների աշխատակիցների համար նախատեսված աշխատատեղի միացման հնարավորություն,
- մոնիթորինգի կենտրոնացված տվյալների բազայի համար մեկ սերվեր,
- ռադիոմոնիթորինգի և տեղորոշման ծայնային տվյալների ինչպես նաև այլ չափման արդյունքների ծայնագրված ֆայլերի համար նախատեսված 1 ցանցային պահոց,
- ցանցային միացումներ գործող և պլանավորվող սպեկտրի կառավարման տվյալների բազաների հետ:

Գլխավոր կայանի կազմում գտնվող սպասարկվող կայան

Պարունակում է տեղորոշման և մոնիթորինգի համար սարքավորումներ, օպերատորական մեկ աշխատատեղ և SS սարքավորումներ: Նախատեսված է նաև կապուղու տրամադրում:

Սպասարկվող կայանի կառուցվածքն է

- 8.3 կՀց-ից 100 ՄՀց հաճախականային տիրույթի համար 1 շրջանաձև ուղղվածության անտենա,
- 20 ՄՀց-ից 6ԳՀց հաճախականային տիրույթի համար 1 շրջանաձև ուղղվածության անտենա,
- տեղորոշման համար նախատեսված 1 անտենա,
- 1 հատ ընդունիչ/տեղորոշիչ
- մոնիթորինգի սարքավորումների ղեկավարման համար 1 սերվերային համակարգիչ,
- կայանի ղեկավարման համար 1 օպերատորական դյուրակիր համակարգիչ
- կապի ցանցի ինտերֆեյս,
- ցանցային սարքավորումներ (տալիներ, անջատիչներ և այլն),
- սարքավորումների համար նախատեսված կանգնակ,
- տեղային և հեռավոր կառավարման համար նախատեսված ծրագրային ապահովում,
- աշխարհագրական տեղեկատվության պատկերման համար նախատեսված ծրագրային ապահովում,
- սպեկտրի կառավարման տվյալների բազաների ծրագրային ինտերֆեյսներ և մշակման մեդուլներ:

Սարքային և ծրագրային ապահովումը թույլ է տալիս հսկել 8.3 կՀց-ից 6 ԳՀց հաճախականային տիրույթը և իրականացնել տեղորոշումներ 20 ՄՀց-ից 3 ԳՀց:

Ծրագրային ապահովումը թույլ է տալիս.

- չափել հաճախականությունները և նրանց շեղումները (ITU-R SM.377),
- չափել դաշտի լարվածությունը (ITU-R SM.378),
- չափել հաճախականությունների շերտի լայնությունը (ITU-R SM.443),
- չափել ռադիոհաճախականությունների սպեկտրի զբաղվածության աստիճանը (ITU-R SM.182/ITU-R SM.328),
- չափել մոդուլացման գործակիցը և հաճախականության շեղումը (ITU-R SM.328),
- չափել ITU-R SM.1600 ուղեցույցում տրված տեխնիկական պարամետրերը,
- ՇԲՀ/ՈւԲՀ և բարձր հաճախականային շերտերում թույլ է տալիս իրականացնել տեղորոշման և տեղակայման վայրի որոշման աշխատանքներ, ծայնային հսկում և նույնականացում,
- ռադիոմոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում պահպանման ենթահամակարգին,
- ռադիոմոնիթորինգի և ռադիոտեղորոշման ինքնավար հատվածների կառավարում,

- հսկել լիցենզավորված հաղորդակների աշխատանքային պարամետրերի համապատասխանությունը,
- որոշել նոր (անօրինական) ազդանշանները, որոնք կարող են ազդել առավել կարևոր կապի համակարգերի աշխատանքներին,
- օգտագործելով ռադիոմոնիթորինգի և ռադիոտեղորոշման անհրաժեշտ քանակի ինքնավար հատվածները՝ իրականացնել մեծ շրջանների ռադիոմոնիթորինգ,
- տրված ծրագրով և ժամանակացույցով ավտոմատ կերպով կատարել ռադիոազդանշանների և խանգարումների չափումներ և հսկում:

5.2 Սպասարկվող կայաններ

Պարունակում է մոնիթորինգի և տեղորոշման իրականացման համար սարքավորումներ, 1 օպերատորական աշխատատեղ և SS սարքավորումներ: Նախատեսված է նաև կապուղու տրամադրում: Տիպային սպասարկվող կայանի կառուցվածքն է.

- 8.3 կՀց-ից 100 ՄՀց հաճախականային տիրույթի համար շրջանաձև ուղղվածության 1անտենա,
- 20 ՄՀց-ից 6 ԳՀց հաճախականային տիրույթի համար շրջանաձև ուղղվածության 1անտենա,
- տեղորոշման համար նախատեսված 1 անտենա,
- 1 հատ ընդունիչ/տեղորոշիչ,
- Մոնիթորինգի սարքավորումների ղեկավարման համար 1 սերվերային համակարգիչ,
- կայանի ղեկավարման համար 1 օպերատորական դյուրակիր համակարգիչ,
- կապի ցանցի ինտերֆեյս,
- ցանցային սարքավորումներ (տալիներ, անջատիչներ և այլն),
- Սարքավորումների համար նախատեսված կանգնակ,
- Տեղային և հեռահարկառավարման համար նախատեսված ծրագրային ապահովում,
- Աշխարհագրական տեղեկատվության պատկերման համար նախատեսված ծրագրային ապահովում,
- Սպեկտրի կառավարման տվյալների բազաների ծրագրային ինտերֆեյսներ և մշակման գործիքներ, Սարքային և ծրագրային ապահովումը թույլ է տալիս հսկել 8,3կՀց-ից մինչև 6 ԳՀց հաճախականային տիրույթը և օգտագործել տեղորոշիչ 20 ՄՀց-ից 3 ԳՀց տիրույթում: Սարքային և ծրագրային ապահովումը թույլ է տալիս.
- չափել հաճախականությունները և նրա շեղումները (ITU-R SM.377),
- չափել դաշտի լարվածությունը,
- չափել հաճախականությունների շերտի լայնությունը, (ITU-R SM.443),
- չափել ռադիոհաճախականությունների սպեկտրի զբաղվածության աստիճանը (ITU-R SM.182/ITU-R SM.328);
- չափել մոդուլացման գործակիցը և հաճախականության շեղումը (ITU-R SM.328),
- չափել ITU-R SM.1600 ուղեցույցում տրված տեխնիկական պարամետրերը
- ՇԲՀ/ՈւԲՀ և բարձր հաճախականային շերտերում թույլ է տալիս իրականացնել տեղորոշման և տեղակայման վայրի որոշման աշխատանքներ, ձայնային հսկում և նույնականացում,
- ռադիոմոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում պահպանման և ենթահամակարգին,
- ռադիոմոնիթորինգի և ռադիոտեղորոշման ինքնավար հատվածների ղեկավարում,
- հսկել լիցենզավորված հաղորդակների աշխատանքային պարամետրերի համապատասխանությունը,
- որոշել նոր (անօրինական) ազդանշանները, որոնք կարող են ազդել առավել կարևոր կապի համակարգերի աշխատանքներին,
- օգտագործելով ռադիոմոնիթորինգի և ռադիոտեղորոշման անհրաժեշտ քանակի ինքնավար հատվածները՝ իրականացնել մեծ շրջանների ռադիոմոնիթորինգ,
- տրված ծրագրով և ժամանակացույցով ավտոմատ կերպով կատարել ռադիոազդանշանների և խանգարումների չափումներ և հսկում:

5.3 Ոչ սպասարկվող կայաններ

Ոչ սպասարկվող կայանը պարունակում է մոնիթորինգի և տողորոշման համար նախատեսված սարքավորումներ: Նախատեսված է նաև կապուղու տրամադրում:

Ոչ սպասարկվող կայանների կառուցվածքը.

- 8.3 կՀց-ից 100 ՄՀց հաճախականային տիրույթի համար շրջանաձև ուղղվածության 1 անտենա,
- 20 ՄՀց-ից 6 ԳՀց հաճախականային տիրույթի համար շրջանաձև ուղղվածության 1 անտենա
- Տեղորոշման համար նախատեսված 1 անտենա,
- 1 չսպասարկվող համակարգ՝ մոնիթորինգի համար նախատեսված ընդունիչով, տեղորոշման հնարավորությամբ,
- Կապի միջոցների սարքավորումներ,
- Հեռահար կառավարման համար նախատեսված ծրագրային ապահովում:
Սարքային և ծրագրային ապահովումը թույլ է տալիս հսկել 8.3 կՀց-ից 6 ԳՀց հաճախականային տիրույթը և իրականացնել տեղորոշումներ 20 ՄՀց-ից 3 ԳՀց հաճախականային տիրույթում:

Ծրագրային ապահովումը թույլ է տալիս.

- չափել հաճախականությունները և նրա շեղումները (ITU-R SM.377),
- չափել դաշտի լարվածությունը ն (ITU-R SM.378),
- չափել հաճախականությունների շերտի լայնությունը (ITU-R SM.443)
- պարզել ռադիոհաճախականությունների սպեկտրի զբաղվածությունը (ITU-R SM.182/ITU-R SM.328);
- չափել մոդուլացման գործակիցը և հաճախականության շեղումը (ITU-R SM.328),
- ՇԲՀ/ՈւԲՀ հաճախականային շերտերում թույլ է տալիս իրականացնել տեղորոշում, մասնակցել տեղակայման վայրի որոշման աշխատանքներին և կատարել ձայնային հսկում,
- ռադիոմոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում տվյալների պահպանման ենթահամակարգին,
- հսկել լիցենզավորված հաղորդակների աշխատանքային պարամետրերի համապատասխանությունը,
- որոշել նոր (անօրինական) ազդանշանները, որոնք կարող են ազդել կապի համակարգերի աշխատանքներին,
- տրված ծրագրով և ժամանակացույցով ավտոմատ կերպով կատարել ռադիոազդանշանների և խանգարումների չափումներ և հսկում,
- ավտոմատ կերպով ակտիվացնել ինքնավար աշխատանքը,
- տեղային ցանցի կամ շարժական կապի միջոցով իրականացնել կայանի հեռահար ղեկավարումը,
- կառավարումը տեղափոխել սպասարկվող և շարժական կայաններին:

5.4 Մոնիթորինգի շարժական կայան

Մոնիթորինգի շարժական կայանը պարունակում է մոնիթորինգի և ազդանշանների աղբյուրների որոշման համար նախատեսված սարքավորումներ, 1 օպերատորական աշխատատեղ և SS սարքավորումներ: Նախատեսված է նաև կապուղու տրամադրում:

Մոնիթորինգի շարժական կայանի կառուցվածքն է.

- 8.3 կՀց-ից 100 ՄՀց հաճախականային տիրույթի համար շրջանաձև ուղղվածության 1 անտենա,
- 20 ՄՀց-ից 6 ԳՀց հաճախականային տիրույթի համար շրջանաձև ուղղվածության 1 անտենա,
- Մոնիթորինգի համար նախատեսված 1 անտենային համակարգ, որը բաղկացած է 2 ուղղորդված անտենաներից՝ ըստ ազիմուտի և բևեռացման պտտելու հնարավորությամբ,
- 80 ՄՀց-ից 2 ԳՀց տիրույթի համար նախատեսված լոգոպերիոդիկ 1 անտենա,
- 400 ՄՀց-ից 6 ԳՀց տիրույթի համար նախատեսված լոգոպերիոդիկ 1 անտենա
- 1 տեղորոշիչ անտենա,
- 1 անտենային անջատիչ և պտտող սարքավորման ղեկավարման սարք, ինչպես նաև անտենային կայմի ղեկավարման սարք,
- մոնիթորինգի համար նախատեսված 1 ընդունիչ՝ տեղորոշման հնարավորությամբ,
- տեղական կառավարման համար 1 օպերատորական դյուրակիր համակարգիչ,
